

# ԳՈՐԾԱՉՈՎ-ԲՈՒՅ. ԻԱՆԴԻԱՊՈԼ 7ՐՈԴ

ՇԵՐՍԶ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

1991 թուականի Յուլիսի 30-  
ի 31ին Մոսկովյան տեղի ունե-  
ցան խորհրդա-ամերիկան բարձր  
մակարդակի բանակցութիւններ:

Հանդիպման առաջին օրը  
կնքուեցին 5 պայմանագրեր երկու<sup>1</sup>  
երկրների համագործակցութեան  
գարզացման տարրեր բնագաւառ-  
ների վերաբերեալ:

Յուլիսի 31ին բանակցութիւն-  
ների առարկան ստրատեգիական  
յարձակողական գէնի կրնատման  
վերաբերեալ պայմանագրի ստո-  
րագրութեան հարցն էր: Ըստ նոր  
համաձայնութեան կրնատուելու է  
այդ հրքիոնների շուրջ 30 տոկոսը,  
որը դիտորդները համարում են  
կարեւորագոյն նուանում երկու<sup>2</sup>  
կողմերի եւ միջազգային խաղա-  
ղութեան համար: Որոշակի իմաս-  
տով շրջադարձ է կատարում  
40ամեայ սպառազինման մրցա-  
վագրի կասեցման գործում:

Հարկ է նշել, որ Զուշը Բուչը<sup>3</sup>  
Մոսկովյան ջերմօրէն ընդուն-  
ւեց: Եթէ Գորբաչովն իր ելոյրնե-  
րում անընդհատ շեշտում էր խոր-  
հրդային գաղափարախօսութեանը  
միանգամայն խորք մտեր, ինչ-  
պէս օրինակ մարդու իրաւունքնե-  
րի պաշտպանութիւն, մարդասի-  
րութեան որդեգրում, համամարդ-  
կային արժեքների ընդունում, ա-  
պա Բուչը յատկապէս շեշտում էր  
համաշխարհային բաղաբականու-  
թեան խնդիրների լուծման անհրա-  
ժեշտութիւնը (Մերձաւոր Արեւել-  
քում, Եւրոպայում, Կենտրոնական  
Ամերիկայում եւ այլուր): Դա  
այդպէս է, որովհետեւ խորհրդա-  
յին Միութիւնը այլեւս չունի ոչ  
հզօր տնտեսութիւն, ոչ նոր  
գաղափարներ աշխարհի վրայ



Եերազդելու համար, այն գեպ-  
եռում, եթէ Ամերիկայի համակող-  
մանի հզօրութիւնը նրան բոյլ է  
տալիս շարունակել աշխարհը դի-  
տել որպէս ամերիկան բաղաբա-  
կանութեան ասպարէզ:

Միաժամանակ երկու նախա-  
զակիներն էլ միմեանց բարձր էին  
գնահատում. Գորբաչովը՝ Բուչին  
նրա համար, որ Ամերիկան ընդա-  
ռաջ է զնում ԽՍՀՄին տնտեսա-  
կան օգնութեան եւ բաղաբական  
աջակցութեան գործում, իսկ Բու-  
չը՝ Գորբաչովին, որ աշխարհում  
ամենամեծ բանակ ունեցող եր-  
կիրը դադարում է վտանգ ներկա-  
յացնել Ամերիկայի համար եւ ըս-  
տիպուած մտածում է դառնալ  
համաշխարհային տնտեսական  
համակարգի անդամ:

Բուչի ելոյրներում ի յայտ ե-  
կաւ մի նոր բաղաբական հարցա-  
դրում Մերձբալթեան պետու-  
թիւններ-Կուրք: Հետաքրքիր է, թէ  
նա ի՞նչ նկատի ունի, եթէ կըրկ-  
նում է այդ նոր զուգորդութիւնը:  
Գուցէ նա նպատակ ունի նշուած  
երկրները ազատուած տեսնել կո-  
մունիզմի բուլացած նիրաններից:

Այս ֆոնի վրայ յատկանշական է  
Նազարբայջեի եւ Ելշինի առըն-  
չութիւնները բարձր մակարդակի  
այս հանդիպմանը: Եթէ Նազար-  
բայյեւը խորհրդային պատուիրա-  
կութեան կազմում է որպէս օրի-  
նակելի հանրապետութեան ղեկա-  
վար, ապա Ռուսաստանի նախա-  
զահը նոյն կրեմլում ինքնուրոյն  
ընդունում է Բուչին՝ ոուս-ամե-  
րիկան յարաբերութիւնների գար-  
զացման շրջանակներում: Հանրա-  
պետութիւնների հարցի նման ոչ  
միօրինակ ներկայացումը եւս մի  
բայլ է Ամերիկային հաւաստիաց-  
նելու, որ ազգային հարցում ժո-  
ղովրդավարութիւնը ինչ-որ առա-  
ջընքաց բայլ կատարել է: Բայց  
Բուչը արդեօ՛ այդպէս է ընդու-  
նում, որովհետեւ հանրապետու-  
թիւնների եւ նահանգների մինչեւ  
կապերի հաստատումը նա համա-  
րեց կարեւոր բայլ: Այդպիսին է  
հանրապետութիւնների իրական  
կարգավիճակը ամերիկան գնա-  
հատմամբ:

Գենե կարող չնշել մի հանգա-  
մանք եւս: Եթէ Գորբաչովը ա-  
նընդհատ շեշտում է մարդու ի-  
րաւունքի խնդիրը, մարդասիրու-  
թեան կարեւորութիւնը, ապա չի՝  
յիշում արդեօ՛, որ նոյն ժամանակ  
իր զինուորները նիշտ հակառակն  
են իրականացնում իր Միութեան  
ամենատարբեր անկիւններում  
Շահումեանից ու Արցախից մին-  
չեւ Մերձբալթիկա:

Այօ՛, զարմանալիօրէն տարբեր  
են բաղաբական խօսքն ու բաղա-  
բական գործը: Եւ մենք պարտա-  
ւոր ենք երբեք չմոռանալ, որ որո-  
շիչը գործն է: Դա լաւ են հասկա-  
նում թէ Բուչը եւ թէ Գորբաչովը: